

ներա մէջքին եւ մի տեսակ կօրսէտի դեր է կատարում: Այդ գօտին նրա հոգածութեան մասնաւոր առարկան է միշտ եւ նրա ճաշակի ու շնորհքի սովորական չափը:

Որքան օբիի կտորը գեղեցիկ է, որքան հարուստ է նրա բանաւածքը եւ որքան շնորհալի կապւածքը, այնքան աւելի ընտիր է համարւում ճապոնուհու տուալէտը եւ այնքան աւելի է իր ընկերուհիների նախանձը շարժում:

Տղամարդու կիմօնօնը (խալաթ) կնոջինից շատ քիչ է տարբերւում, մանաւանդ անվարժ աչքի համար. նա էլ է կապած գօտիով, միայն շատ աւելի նեղ, որը պարզապէս կրեպ-դը-շինի մի նեղ շերտ է ներկայացնում:

Իսկ նրանց մինչեւ ականջները քաշած եւրոպական գլխարկը, հագի փայտէ ծանր կօշիկների հետ միասին մի հետաքրքիր խառնուրդ է կազմում Եւրոպայի ու Ասիայի: Անբաժան հովհարը կամ մի հովանոց բռնած ձեռքին՝ նրանք հանգիստ գնում են ու գալիս իրենց բարի ու մտածկոտ դէմքերով:

Մի շատ բնորոշ դէմք էր ներկայացնում եւ ոստիկանը, որ ամբողջապէս եւրոպական սպիտակ զգեստների մէջ, երկար սուրը մէջքին, կանգնել էր այնտեղ իր վսեմ պաշտօնի խորին գիտակցութիւնը երեսին:

Մօտիցս լսւում է յանկարծ զանգակի սուր հնչիւնը: Մի բարձրահասակ մարդ կանգ է առել փողոցի ճիշտ մէջտեղը եւ թատրոնական վեհափառութեամբ, յենած ձեռքի դրօշակին, որի վրա մի քանի ճապոնական տառեր են գրած, մի անբնական ձայնով ինչ-որ ասում է արագ, շարունակ դիմելով աջ ու ձախ շրջապատողներին, որոնք սակայն մի մեծ հետաքրքրութիւն չէին ցոյց տալիս: